«Լոնդոն Բիզնես Գրուպ» ՀՁ ՍՊԸ
ՀՀ, Երևան, Խորենացի 27ա/1
"London Business Group" JV LLC
27a Khorenatsi str., apt. 1, Yerevan, RA
Tel: (+37410) 541272, 560852
E-mail: audit@lbg.am
Web: www.lbg.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Նորավանք» Գիտակրթական Հիմնադրամի Հոգաբարձուների Խորհրդին

Մեր կողմից իրականացվել է «Նորավանք» Գիտակրթական Հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշիռը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով մեզանից պահանջվում է բավարարել բարոյական վարքի կանոնները և պլանավորել ու անցկացնել աուդիտը՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր՝ ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիք

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Աուդիտի ղեկավար՝
Գևորգ Մովսիսյան

Տնօրեն՝
Տիգրան Զորյան

25 փետրվարի, 2016թ.

«ԼՈՆԴՈՆ ԲԻԶՆԵՍ ԳՐՈՒՊ»
"LONDON BUSINESS GROUP"
01223655

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	202,100	209,329
Ոչ նյութական ակտիվներ	5	6	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		*202,106*	*209,329*
Ընթացիկ ակտիվներ			
Ապրանքանյութական պաշարներ	6	464	357
Դեբիտորական պարտքեր	7	292	408
Տրված կանխավճարներ	7	72	69
Դրամական միջոցներ	8	10,316	3,909
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		*11,144*	*4,743*
Ընդամենը ակտիվներ		**213,250**	**214,072**
Կապիտալ և պարտավորություններ			
Ընդամենը կապիտալ		-	-
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	9	202,106	209,329
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		*202,106*	*209,329*
Ընթացիկ պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր	10	700	689
Եկամուտներին վերաբերող շնորհներ	9	9,584	4,054
Պահուստներ	11	860	-
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		*11,144*	*4,743*
Ընդամենը պարտավորություններ		**213,250**	**214,072**
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ		**213,250**	**214,072**

Կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Տնօրեն՝
Գ. Հարությունյան

Գլխավոր հաշվապահ՝
Հ. Բարսեղյան

Կ. Տ.

24 փետրվարի, 2016թ.